Փորձնական դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների գնահատման ուղեցույց

1. Սույն ուղեցույցը նախատեսված է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար և նկարագրում է հանրակրթական առարկաների դասագրքերին և այդ դասագրքերի ուսուցչի ձեռնարկներին (ՈՒՁ) ներկայացվող պահանջներին համապատասխան ստեղծված մի քանի անուն փորձնական դասագրքերի գնահատման շրջանակներում ուսուցիչների գործողությունները:

2. Փորձնական կարգով մի քանի անուն դասագրքերի գնահատման նպատակն է փորձարկել դասագրքերի և ՈՒՁ–ների ստեղծման նոր չափանիշները, բնութագրիչները, գնահատման գործիքները և ստանալ ուսուցչի կարծիքը ուսուցման գործընթացում տվյալ դասագրքի և ՈՒՁ–ի կիրառման արդյունավետության և նպատակայնության վերաբերյալ:

3. Հանրակրթական առարկաների փորձնական դասագրքերի և ՈՒՁ–ների գնահատումն իրականացվում է առցանց ձևով, որին պետք է մասնակցեն միայն տվյալ առարկան դասավանդող ուսուցիչները: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ուսումնասիրի և գնահատի միայն իր կողմից դասավանդվող առարկայի(ների) դասագրքերը և ՈՒՁ–ները (եթե դրանք կիսված են մասերի, ապա 1-ին և 2-րդ մասերը միասին)՝ առցանց պատասխանելով համապատասխան գնահատման հարցաթերթին:

4. Դասագրքերի ուսումնասիրման և գնահատման վերջնաժամկետը սահմանվում է 2021 թվականի հունիսի 18-ը:

5. Գնահատումն իրականացվում է ստորև ներկայացված քայլաշարով.

1) Էլեկտրոնային հասցեին ուղարկված հղումով մուտք գործել համապատասխան հարթակ, որտեղ տեղադրված են գնահատման ներկայացված դասագրքերը, դրանց ՈՒՁ-ները և առցանց գնահատման հարցաթերթի հղումը:

2) Ընտրել դասավանդվող առարկային համապատասխան դասագիրք(եր)ը և ՈՒՁ-ն: Մինչ հարցաթերթը լրացնելը՝ նախապես մանրամասն ուսումնասիրել դասագիրքը և ՈՒՁ-ն (եթե դրանք կիսված են մասերի, ապա 1-ին և 2-րդ մասերը միասին), փորձնական կիրառել, ծանոթանալ գնահատման հարցաթերթի բովանդակությանը, գնահատման ուղեցույցին և ապա պատասխանել հարցաթերթի հարցերին:

3) Հարցաթերթում ներառված հարցերը ներկայացված են առանձին բաժիններով, որոնք վերաբերում են դասագրքի բովանդակությանը, մեթոդական ապարատին, շարադրման լեզվին, ձևավորմանը և ՈՒՁ-ին ներկայացվող պահանջներին: Այդ պահանջները որոշակիացվել և խմբավորվել են առանձին չափանիշներով և դրանց յուրաքանչյուրին համապատասխանող բնութագրիչներով, ըստ որոնց պետք է գնահատվի տվյալ դասագիրքը և ՈՒՁ–ն:

4) Յուրաքանչյուր բնութագրիչին, կախված դասագրքում և ՈՒՁ-ում վերոնշյալ հատկանիշների առկայության չափից, ուսուցիչը կարող է տալ հետևյալ երեք միավորներից որևէ մեկը.

- **2 միավոր,** եթե բնութագրիչի հատկանիշները ***հիմնականում առկա են***,
- **1 միավոր,** եթե բնութագրիչի հատկանիշները ***մասամբ են առկա***,

- **0 միավոր,** երբ բնութագրիչի հատկանիշները ***ակնհայտորեն բացակայում են:***

Այն դեպքերում, երբ այս կամ այն չափանիշի կամ բնութագրիչի առնչությամբ հավելյալ դիտարկումների կամ մեկնաբանությունների անհրաժեշտություն կառաջանա, ապա հարցաթերթի "Այլ առաջարկներ" բաժիններում կարող են արվել համապատասխան դիտողություններ և առաջարկություններ:

5) Նախքան հարցաթերթը լրացնելը, դասագրքի և ՈՒՁ-ի բովանդակության ուսումնասիրմանը զուգահեռ, ցանկալի է, որ ուսուցիչը մանրակրկիտ ծանոթանա նաև հարցաթերթի հարցերին և դրանց համատեքստում առավել խորքային ու համակողմանի ուսումնասիրի գնահատվող դասագիրքն ու ՈՒՁ-ն:

6) Հարցաթերթի լրացման ժամանակ ուսուցիչը հնարավորություն չունի ընթացքում միջանկյալ պահպանելու գնահատման արդյունքները և հետո շարունակել լրացնելը: Եթե ուսուցիչը հարցաթերթն ամբողջությամբ կամ մասնակի լրացրել է, բայց առանց «Հաստատել» (Submit) կոճակը սեղմելու այն փակել է կամ դուրս է եկել կայքից, ապա լրացված մասի տվյալները չեն պահպանվում:

7) Անհրաժեշտ է պատասխանել հարցաթերթի *-ով նշված՝ պարտադիր լրացման բոլոր հարցերին և վերջում սեղմել «Հաստատել» (Submit) կոճակը:

8) Եթե հարցաթերթի պարտադիր լրացման դաշտերը կամ հարցերի մի մասի պատասխաններն ինչ-ինչ պատճառով չեն լրացվել (բաց են թողնվել), ապա «Հաստատել» (Submit) կոճակը սեղմելուց հետո ավտոմատ վերադարձ է կատարվում չպատասխանված հարց(եր)ին:

9) Հարցաթերթի լրացման ընթացքում, մինչ «Հաստատել» (Submit) կոճակը սեղմելը, ուսուցիչը կարող է վերանայել և փոփոխել հարցերին իր դրած միավորները, ավելացնել կամ խմբագրել մեկնաբանությունները:

10) «Հաստատել» (Submit) կոճակը սեղմելուց հետո հարցաթերթը համարվում է վերջնական լրացված և ուղարկված, որի արդյունքներն այլևս փոփոխման ենթակա չեն և պահպանվում են գնահատման բազայում:

11) Գնահատման համար սահմանված ժամկետի ավարտից հետո ԴՇՀ-ի մասնագետների կողմից կամփոփվեն, կվերլուծվեն գնահատման արդյունքները, կպատրաստվի համապատասխան եզրակացություն, որը կտեղադրվի dshh.am կայքում:

12) Փորձնական վարկանիշային գնահատման արդյունքների վերաբերյալ պատշաճ կծանուցվեն հանրակրթության ոլորտի պատասխանատու մարմիններն ու շահագրգիռ կողմերը: